**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**09.02.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 գնման պայմանագրի**

ք. Երևան «27» «05» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Երևան քաղաքի թիվ 56 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել **8200000** (ութ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Թ.Ա.Հ. ԳՐԻԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փ. 1 | ք. Երևան, Թոթովենցի 12/28 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս 2 մ/ճ |
| Հ/Հ 900012002136 | ՀՀ 2052822192401001 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00857439 |
| Վ. Պապիկյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Լ. Գրիգորյան ____________ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
09.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 գնման պայմանագրի
«27» «05» 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ***

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 71241200/952 | Երևան քաղաքի թիվ 56 մսուր-մանկապարտեզի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման խորհրդատվական աշխատանքներ | - | - | - | - | - | 82000000 | 82000000 | 82000000 | 82000000 | 82000000 | 82000000 | 82000000 | 82000000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Թ.Ա.Հ. ԳՐԻԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փ. 1 | ք. Երևան, Թոթովենցի 12/28 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս 2 մ/ճ |
| Հ/Հ 900012002136 | ՀՀ 2052822192401001 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00857439 |
| Վ. Պապիկյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Լ. Գրիգորյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |

ԻՆԵԿՈԲԱՆԿ

25.05.2026 № G6149

**ԵՐԱՇԽԻՔ N EA26/00565**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 09/02/2026թ.-ին կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 պայմանագրից և կնքվելիք Համաձայնագիր N 1-ից /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 1,150,000.00 (մեկ միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի, ներառյալ երաշխիքային ժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ավել քան 22/01/2027թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **anna.darbinyan@yerevan.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/7-2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին **www.procurement.am** հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
**«ԿՈՄԻՏԱՍ 2» Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ** **ՋԱՎԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Լիլյա Կաջոյան
Ստորաբաժանում՝ ՎՀԿ
Հեռ.՝ +374 10 510510 (5127)